ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 սեպտեմբերի 2022 թվականի N 383

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 373-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԾՎԱՆԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ «ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՆՅԱՐԴԱՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՇԵՆՔԸ «ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով, 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով և հիմք ընդունելով «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲ ընկերության տնօրենի 2022 թվականի սեպտեմբերի 29-ի գրությունը՝

որոշում եմ.

1. Թույլատրել «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲ ընկերությանը «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության հետ կնքել Սյունիքի մարզի Կապան համայնքի Արծվանիկ բնակավայրում գտնվող, սեփականության իրավունքով նույն ընկերությանը պատկանող շենքի ու շինությունների (իրենց սպասարկման 1.566 հա հողամասով) անհատույց օգտագործման պայմանագիր:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2021 թվականի սեպտեմբերի 17-ի «Սյունիքի մարզի Կապան համայնքի Արծվանիկ բնակավայրում գտնվող «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲ ընկերությանն անհատույց հանձնված շենքը նույն ընկերության հաշվեկշռից հանելու և Սյունիքի մարզպետարանի հաշվեկշռում հաշվառելու նպատակով հանձնաժողով ստեղծելու, ինչպես նաև ՀՀ Սյունիքի մարզպետի 1999

թվականի օգոստոսի 24-ի N 43-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 373-Ա որոշումը:

30.09.2022

X

ՂՈՒԿԱՍՅԱՆ ՌՈԲԵՐՏ

Подписано: GHUKASYAN ROBERT 3712800290

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ռ. Ղուկասյան

2022թ. սեպտեմբերի 30
ք. Կապան